քացած Բում գիւղի հիւսիսային կողմը թեքուած Կովկասեան լեռնաշղթայի վրայ։ Յետոյ Աղուանից աշխարհի Վաչագան բարեպաշտ թագաւորը հանել է տալիս ս. Եղիշէի մասունքները և տեղափոխելով Արցախ, թաղել տալուց յետոյ, նրա շիրմի վրայ շինում է մի վանք ս. Եղիշէի անունով *)։ Ուտիացոց երկրի զանազան մասերում թէև կան մի քանի վանքեր ու սրբավայրեր, բայց ամենից շատ յարգուածներն ու սիրուածները սրանք են, որոնց ուխտագնացութեան օրերը լինում են Զատկից յետոյ—Յինանց օրերում, երբ Ուտիացոց երկրի ամեն ծայրերից խուռն բազմութեամբ ուխտ են գնում՝ թէ խսկական Հայ քրիստոնեաները և՛ թէ Հայից թրքացած մահմեդականները։ Կեանքիս մէջ ես շատ եմ տեսել թէ նշանաւոր վանքեր և թէ բազմաթիւ ուխտագնացութիւններ, բայց նրանցից և ոչ մէկը չէ կարող համեմատուել Ուտիացոց երկրի ուխտագնացութեան հետ։ Վասնզի ընդհանրապէս Թիֆլիզի և մասնաւորապէս Արարատեան աշխարհի ուխտագնացութեան սրբավայրերում շատ անգամ տեղի են ունենում տգեղ միջնադէպեր—արբեցողութիւն, կռիւ և իրար քիթ ու պռունգ ջարդել։ Այն ինչ՝ Ուտիացոց աշխարհի սրբավայրերում, ուխտագնացութեան միջոցին, սէր և խաղաղութիւն է թագաւորում, ամենքը ջերմ հաւատով, խորին պատկառանքով և երկիւղածու-

---

*) Տես «Աղուանից երկիր», երես 256։